



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՀՀ հակակոռուպցիոն դատարան,  
նախագահող դատավոր՝ Մ.Մոսինյան

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,  
նախագահող դատավոր՝ Ա.Նահապետյան

2025 թվականի մարտի 10-ին

քաղաք Երևանում

ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն  
հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ վճռաբեկ  
դատարան),

նախագահությամբ՝  
մասնակցությամբ դատավորներ՝

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ  
Ռ.ՄԻՆԻԹԱՐՅԱՆԻ  
Ս.ԶԻՉՈՅԱՆԻ  
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ [REDACTED]  
վերաքերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի  
փետրվարի 23-ի որոշման դեմ պաշտպաններ [REDACTED]  
հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի մայիսի 8-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 5-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 5-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 44-284-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախաձեռնվել է թիվ [REDACTED] քրեական վարույթը:

2024 թվականի հունվարի 17-ին քրեական վարույթի նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությանը:

2024 թվականի հունվարի 31-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել [REDACTED] նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

2024 թվականի հունվարի 31-ին որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալ [REDACTED] դատարան ներկայացնելու համար ձերբակալելու մասին:

2024 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 23:33-ին [REDACTED] ձերբակալվել է:

2. 2024 թվականի փետրվարի 1-ին վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (այսուհետ՝ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով կիրառելու վերաբերյալ՝ նույն ժամանակահատվածում սահմանափակելով մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է և [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ [REDACTED] պաշտպաններ [REDACTED] հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը (այսուհետ՝ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ [REDACTED] բերել են հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքաբերները նշել են, որ սույն վարույթով առկա չեն եղել մեղադրյալ [REDACTED] նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու բավարար պայմաններ, հիմքեր և անհրաժեշտություն:

Մասնավորապես, ըստ բողոքաբերների, [REDACTED] վերաբերյալ միջնորդության հիմքում դրվել են ենթադրություններ պարունակող անուղղակի ապացույցներ, իսկ նրա կողմից հանցանք կատարելու մասին վկայող ուղղակի տվյալներ առկա չեն:

5.1. Բողոքաբերները գտնում են, որ [REDACTED] պաշտոնատար անձինք, եթե նույնիսկ առերևույթ խախտել են գնումների ոլորտի օրենսդրության որոշ դրույթներ, ապա դատարան ներկայացված նյութերի համաձայն՝ դա արել են ոչ թե ի վնաս պետական, ծառայողական շահերին, այլ՝ այդ շահերը պաշտպանելու նպատակով: Այսինքն, բացակայում է հանցակազմի պարտադիր տարրերից մեկը՝ հանցանք կատարելու դիտավորությունը: Բողոքաբերների պնդմամբ՝ այս հանգամանքն ակնհայտ է քրեական վարույթի՝ դատարան ներկայացված նյութերով, ու նկարագրված պայմաններում բացակայում են և՛ պաշտոնատար անձանց կողմից լիազորությունները չարաշահելու, անցնելու հանցակազմերը, և՛ [REDACTED] կողմից նման արարքին հանցակցության հանգամանքը:

Բողոքաբերները փաստարկել են նաև, որ [REDACTED] մեղադրանքում պետությանը կամ որևէ ֆիզիկական, իրավաբանական անձի պատճառով վնաս նկարագրված չէ:

5.2. Անդրադառնալով կալանավորման հիմքերից մեկին՝ քրեական վարույթին խոչընդոտելու հիմքին, բողոքաբերները նշել են, որ քրեական վարույթով

ապացույցների հավաքման սկզբնական, ակտիվ փուլը հիմնականում ավարտվել է, ինչը այդ մասով կալանքի միջնորդությունը մերժելու մասին վկայող հիմնավոր փաստարկ է:

Բողոքաբերների պնդմամբ՝ վարության նյութերից ակնհայտ երևում է, որ [REDACTED] մրցույթի մասնակցության գործընթացում չի ունեցել կենտրոնական դերակատարում, և նախաքննության մարմինն էլ որևէ առարկայական, փաստական հանգամանք չի նշել, որի հիման վրա կարելի էր պնդել, որ [REDACTED] կարող է կամ առավել ևս դիտավորություն ունի քննությանը խոչընդոտել՝ մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու կամ որևէ այլ եղանակով:

5.3. Բողոքաբերները արձանագրել են, որ [REDACTED] երիտասարդ կին է, խնամքին ունի 2 մանկահասակ երեխա: Ընդ որում, [REDACTED] երեխաները նրա ձերբակալումից և կալանավորումից հետո հայտնվել են ծանրագույն վիճակում և՛ հոգեբանորեն, և՛ պատշաճ խնամքի ապահովման առումով: Բացի այդ, [REDACTED] նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրական, ունի աշխատանք, մեղադրանքում նկարագրված իրադարձությունների ընթացքում ազատվել է [REDACTED] ընկերությունում աշխատանքից և այլևս չի առնչվել վերոհիշյալ գնման գործընթացի հետ:

5.4. Բողոքաբերները գտել են նաև, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել են [REDACTED] արդար դատաքննության և անձնական անձեռնմխելիության ու ազատության հիմնարար իրավունքները:

5.5. Բողոքաբերները նշել են նաև, որ 2024 թվականի փետրվարի 12-ին հսկող դատախազի որոշմամբ [REDACTED] ազատվել է կալանքից, և ավելի քան մեկ ու կես ամիս առաջ ազատվելով արգելանքից՝ [REDACTED] պատշաճ կերպով պահպանում է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցների պայմանները:

6. Անփոփելով վերոգրյալը՝ բողոքաբերները խնդրել են Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշումը բեկանել և կայացնել դրան փոխարինող դատական ակտ:



8. Առաջին աստիճանի դատարանը 2024 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Դ]ատարանը գտնում է, որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ [REDACTED] առնչություն ունի իրեն մեղաագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարմանը:

Վերոնշյալը, ի թիվս այլնի, հիմնավորվում է Դատարան ներկայացված՝ [REDACTED] [REDACTED] կողմից օգտագործվող [REDACTED] բջջային հեռախոսահամարով «ԹՎային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» և «Ներքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու արդյունքում կատարված խոսակցությունների ձայնագրությունների վերծանման մասին» 2023 թվականի մայիսի 08-ի արձանագրությամբ, [REDACTED] [REDACTED] նկատմամբ տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին» 2023 թվականի մայիսի 08-ի արձանագրությամբ, [REDACTED] [REDACTED] կողմից օգտագործվող [REDACTED] բջջային հեռախոսահամարով «ԹՎային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու արդյունքում կատարված խոսակցությունների ձայնագրությունների վերծանման մասին» 2023 թվականի մայիսի 08-ի արձանագրությամբ, [REDACTED] [REDACTED] կողմից օգտագործվող [REDACTED] բջջային հեռախոսահամարով «ԹՎային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացնելու արդյունքում կատարված խոսակցությունների ձայնագրությունների վերծանման մասին» 2023 թվականի մայիսի 08-ի արձանագրությամբ, [REDACTED] [REDACTED] կողմից օգտագործվող [REDACTED] բջջային հեռախոսահամարով «ԹՎային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացնելու արդյունքում կատարված խոսակցությունների ձայնագրությունների վերծանման մասին» 2023 թվականի մայիսի 08-ի արձանագրությամբ, [REDACTED] [REDACTED] կողմից օգտագործվող [REDACTED] բջջային հեռախոսահամարով «ԹՎային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացնելու արդյունքում կատարված խոսակցությունների ձայնագրությունների վերծանման մասին» 2024 թվականի հունվարի 19-ի արձանագրությամբ:

Դատարանի գնահատմամբ՝ վերոհիշյալ նյութերը պարունակում են փաստական տվյալներ և տեղեկություններ, որոնք իրենց համակցությամբ

հնարավորություն են տալիս անաչառ դիրքորդին եզրակացնելու, որ [REDACTED] հնարավոր է, որ կատարած լինի իրեն մեղաագրվող ենթադրյալ հանցանքը, և որ դեպքերը, իրադարձությունները համընկնում են այն առերևույթ հանցանքին, որի կատարման մեջ վերջինս մեղադրվում է: Այս կասկածությանը Գաբարյանը հարկ է համարում նշել նաև, որ կասկածը հիմնավորող փաստերը պարզապես չէ, որպեսզի բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը հիմնավորելու համար: Որպես խափանման միջոց ընդդեմ մասին միջնորդությամբ և կից նյութերով պեղք է հաստատվի, ոչ թե անձի մեղավորությունը, այլ պեղք է հաստատվի հիմնավոր կասկածը, այլ կերպ՝ մեղադրյալի առնչությունն իրեն մեղաագրվող ենթադրյալ արարքին:

Անդրադառնալով պաշտպանի այն փաստարկին, որ մեղադրյալ [REDACTED] վերագրվող արարքն ակնհայտ սխալ է որակվել՝ Գաբարյանը փաստում է, որ սույն վարույթի շրջանակներում Գաբարյանն իրավունք չունի անդրադառնալու այդ հարցին, քանի որ սույն վարույթը չի հեղափոխում ենթադրյալ հանցագործության բոլոր հանգամանքները հեղազուրելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ փրկած գնահատականը արուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր:

Անդրադառնալով կալանք խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության իրավաչափության հարցին և սույն որոշման 3.1-3.2-րդ կետերի լույսի ներքո գնահատման ենթարկելով սույն դատական գործի նյութերը, Գաբարյանը գրնում է, որ իրարեւանյան չէ վարույթն իրականացնող մարմնի մտավախությունը, որ մնալով ազատության մեջ՝ [REDACTED] կարող է դիմել փախուստի: Եման եզրահանգում կատարելիս Գաբարյանը հաշվի է առնում, որ մեղադրյալի թաքնվելու հավանականությունը վարույթն իրականացնող մարմինը հիմնավորել է միայն վերջինիս վերագրվող հանցանքի ծանրությամբ և ակնկալվող պարծի խստությամբ, ինչպես նաև վերջինիս՝ [REDACTED] աշխարհելու հանգամանքով, ինչը, սակայն, Գաբարյանի գնահատմամբ բավարար չէ նման

հեղինակության հանգեցրու համար, բացի այդ մեղադրյալն ունի մշտական բնակության վայր, մշտական աշխատանք, ամուսնացած է, ունի երկու մանկահասակ երեխա:

Գաղափարանն իրարեւասական չի համարում նաև վարույթն իրականացնող մարմնի այն մերավախությունը, որ մնալով ազատության մեջ՝ մեղադրյալ [REDACTED] կկարարի հանցանք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալը նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել:

Անդրադառնալով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված մյուս հիմքին՝ Գաղափարանը գրնում է, որ վարույթի փոխյալ փուլում ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ [REDACTED] կողմից քրեական վարույթին խոչընդոտելու, այդ թվում՝ նաև՝ ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու հավանականությունը բարձր է:

Գաղափարանի նման եզրահանգման հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները.

- նախաքննությունը գրնվում է ապացույցների հավաքման և ստուգման սկզբնական փուլում, պարզված չեն դեպքի բոլոր հանգամանքները,
- սույն վարույթով դեռևս չի պարզվել ենթադրյալ հանցագործությանն առնչություն ունեցող անձանց ամբողջական շրջանակը, այդ թվում՝ [REDACTED] [REDACTED] հետ հեռախոսային խոսակցությունների ընթացքում մեղադրյալ [REDACTED] կողմից ակնարկած անձի փոխյալները, ումից վերջինս պետք է ճշտեր, թե ինչ հարաբերություններ ունի [REDACTED] հետ,
- վարույթով դեռևս որևէ անձ չի հարցաքննվել, հարցաքննության են ենթակա մեղադրյալի հետ որոշակի փոխհարաբերությունների, այդ թվում՝ նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գրնվող անձինք՝ [REDACTED] ընկերության աշխատակիցները, ինչպես նաև [REDACTED] աշխատակիցներ, որոնցից ոմանց հետ [REDACTED] եղել է պարբերական հեռախոսային կապի մեջ,
- թեև մեղադրյալն այլևս չի աշխատում [REDACTED] ընկերությունում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթադրաբար [REDACTED] փաստաթղթերի փոխանակումը [REDACTED] աշխատակիցների հետ կարարել է նաև էլեկտրոնային փոստի միջոցով, վերջինիս



տրամադրության տակ կարող են լինել վարույթի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, նյութեր,

- մեղադրյալ [REDACTED] վերագրվող հանցագործության բնույթը, վրանգավորության աստիճանը, սպառնացող հնարավոր պատժի խստությունը (վերագրվում է ծանր հանցագործություն, որի համար պատասխանատվություն է նախատեսված բացառապես ազատազրկման ձևով՝ չորսից ութ տարի ժամկետով):

Դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալ հանգամանքներն էականորեն բարձրացնում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ [REDACTED] ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը, միաժամանակ համակցության մեջ թույլ են տալիս ողջամիտ դատողություն անելու այն մասին, որ վարույթի փյույ փուլում նրա ոչ պարզաճ վարքագիծը կանխել հնարավոր է միայն վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջոցով:

Այս համարեքստում անդրադառնալով պաշտպան [REDACTED] այն պնդմանը, որ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցներ գրավի և բացակայելու արգելքի համակցված կիրառմամբ հնարավոր է ապահովել մեղադրյալի պարզաճ վարքագիծը՝ Դատարանը գտնում է, որ վարույթի այս փուլում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման ապահովմանը հնարավոր չէ հասնել մեղադրյալ [REDACTED] նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառմամբ:

Անդրադառնալով մեղադրյալ [REDACTED] անձը բնութագրող փյույներին՝ նախկինում դատապարտված չի եղել, ամուսնացած է, ունի երկու մանկահասակ երեխա, մշտական աշխատանք, Դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքները, քննության սույն փուլում, չեն կարող հակակշռել մեղադրյալին անազատության մեջ պահելով հետապնդվող հանրային շահին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ մեղադրանքի կողմը պարզաճորեն հիմնավորել է [REDACTED] նկատմամբ կալանք խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը և իրավաչափությունը: Այլ կերպ ասած՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ առկա են բավարար փաստական փյույներ,

որպիսի պայմաններում Քննիչի միջնորդությունը Գալարանը գնահատում է հիմնավոր, որը ենթակա է բավարարման (...)»<sup>2</sup>:

9. Վերաքննիչ դատարանը 2024 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ նշել է հետևյալը. «(...) [Այնդրադատնալով մեղադրյալ ██████████ նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի իրավաչափության պայմաններից հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարույթի նյութերում առկա փաստական փյուռներն ու տեղեկությունները վարույթի քննության սույն փուլում ողջամրորեն բավարար են իրավաչափ հետևության հանգելու, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն վերագրվող արարքին, և դեպքը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը մեղադրվում է:

Ինչ վերաբերում հարուկ վերանայման բողոքում պաշտպանի ներկայացրած այն պնդումներին, որ «Գալարանը մանրակրկիտ և օբյեկտիվ չի հետազոտել ներկայացված վարութային նյութերը և սխալ հետևության է հանգել ██████████ ██████████ մասով հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ», ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարույթի նյութերում առկա փյուռները համակցության մեջ գնահատման ենթարկելու պարագայում հաստատվում է մեղադրյալ ██████████ կողմից իրեն վերագրվող հանցագործության հետ օբյեկտիվ կապը, այլ կերպ՝ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված է վերաբերելի փաստական փյուռների բավարար ամբողջությամբ, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ առկա չեն հիմքեր չհամաձայնելու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ Առաջին արյանի դատարանի հետևությունների հետ:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է նաև, որ հարուկ վերանայման բողոքում հիմնավոր կասկածի վերաբերյալ բարձրացված մյուս հարցերի (...) պարզումը, հաստատումը կամ հերքումը վարույթի սույն փուլի քննարկման շրջանակների ինդիքը չէ, այլ դրանք գործն ըստ էության քննելիս դատական քննության ընթացքում գնահատման ենթակա հարցեր են, այսինքն՝ հանդիսանում

<sup>2</sup> Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 68-71:

են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կհասկարվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վարույթի շրջանակներում Առաջին արյանի դատարան ներկայացված են եղել մինչդարական փուլին բնորոշ բավարար տեղեկություններ և փաստեր, որոնք, ի թիվս այլնի, մատնանշում են մեղադրյալ [REDACTED] առնչությունն իրեն մեղսագրված ենթադրյալ հանցանքի կատարմանը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը ևս մեկ անգամ հարկ է համարում շեշտել, որ նախաքննության փուլում պարբերադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը հիմնավորելու համար: Կասկածը հիմնավորելու համար բավարար է հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հասարակող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայությունը, որպիսիք փվյալ դեպքում առկա են:

Անդրադառնալով հարուկ վերանայման բողոքում բարձրացված՝ կալանավորման հիմքերի վերաբերյալ պաշտպանական կողմի ներկայացրած փաստարկներին՝ Վերաքննիչ դատարանն նախևառաջ արձանագրում է, որ խափանման միջոց կալանքը քրեական վարույթի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է: Այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պարզաճ վարքագիծը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս

հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաձև վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության բնականոն ընթացքին: Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերն ունեն կանխարեւսական, մտրավոր բնույթ, քանի որ ենթադրում են սպազային վերաբերող իրադարձություններ: Բացի այդ, կանխարեւսավող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական վարույթով ձեռք բերված որոշակի փյվյալներով, որով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը: Մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փյվյալներ: Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածում թվարկված «մեղադրյալի ոչ պարզաձև վարքագծի դրսևորումները» ոչ թե պետք է արդեն տեղի ունեցած լինեն, այլ ոհսկ կամ հավանականություն կա, որ եթե խափանման միջոց չկիրառվի, սպա դրանք տեղի կունենան:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրյալ [REDACTED] նկարմամբ կալանք կիրառելու անհրաժեշտությանը, նախ փաստում է, որ չի կարող հաշվի չառնվել հետևյալ հանգամանքները. կատարված ենթադրյալ հանցավոր արարքի բնույթը, մեղադրյալ [REDACTED] մասնակցության և ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը նրա ներգրավվածության աստիճանը, սպառնացող հնարավոր պատժի խստությունը, քրեական վարույթի՝ սպացույցների հավաքման ակտիվ փուլում գտնվելը, մի շարք սպացուցողական և վարույթային այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ենթադրյալ հանցանքի վերաբերյալ նշանակություն ունեցող տեղեկություններին տիրապետող անձանց հարցաքննելու անհրաժեշտությունը, այդ անձանց հետ [REDACTED] ունեցած կապերը, ենթադրյալ հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու ուղղությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվող միջոցները:

Նախորդ կետում արված դատողությունների հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը ընդհանուր առմամբ իր համաձայնությունն է հայտնում վարույթի

քննությանը խոչընդոտելու բարձր հավանականության վերաբերյալ Առաջին արյանի դատարանի պարճառարանություններին (...):

Անդրադարձնալով մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքներին, այդ թվում՝ նրան, որ մեղադրյալը խնամքին ունի 2 մանկահասակ երեխա՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ թեև հիշյալ հանգամանքները տվյալ դեպքում կարող էին դիտարկվել որպես բավարար գործոն մեկ ամսից ավելի ժամկետով կալանք չկիրառելու համար, սակայն քրեական վարույթին մեղադրյալի խոչընդոտելու բարձր ռիսկի պայմաններում ինքնին չէին կարող բացառել կալանքի ձևով խափանման միջոց կիրառելը: Սույն դիրքորոշումը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև հարկապես նրանով, որ ինչպես նյութերում, այնպես էլ բողոքում առկա չէ այնպիսի հանգամանք, որից հնարավոր կլիներ եզրակացնել, որ տվյալ դեպքում կային երեխաների խնամքի և հատուկ հոգաբարության հետ կապված այնպիսի առանձնահատկություններ, որոնք անբաժանելի էին մեղադրյալ [REDACTED] (...)<sup>3</sup>:

#### **Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք մեղադրյալ [REDACTED] նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու իրավաչափության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով

(...)

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր

<sup>3</sup> Տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 169-173:

կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...)

բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝ «1. Խախտնման միջոց չի կարող կիրառվել, եթե բացակայում է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածը:

2. Խախտնման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) մեղադրյալի փախուստը կանխելու համար կամ

2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար կամ

3) մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարականությունների կատարումն ապահովելու համար:

3. Խախտնման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խախտնման միջոցների կիրառումն անբավարար է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար»:

12. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ Վահրամ Գևորգյանի, Հարություն Խաչատրյանի գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն Էդգար Եղիազարյանի գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ<sup>4</sup>:

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից , ուստիս հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով,

<sup>4</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Էդգար Եղիազարյանի գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԳ/0017/06/16 որոշումը, կետ 14:

իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել, կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն)<sup>5</sup>:

ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՌ-1480 որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով անձի անձնական ազատության իրավունքին կալանավորման առավել ինտենսիվ միջամտող բնույթը, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում այն ընտրելուց առաջ պարտավոր է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հիմնավորված կերպով բացատրել մնացած բոլոր, ավելի մեղմ խափանման միջոցների ընտրության հնարավորությունը<sup>6</sup>:

Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացատրելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և

<sup>5</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԳ/0017/06/16 որոշումը, կետ 15:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշումը:



կալանավորման պայմանների վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով<sup>7</sup>:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- [REDACTED] նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով<sup>8</sup>,

- Առաջին ատյանի դատարանը 2024 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ արձանագրել է, որ վարույթի նյութերը պարունակում են փաստական տվյալներ և տեղեկություններ, որոնք իրենց համակցության մեջ հնարավորություն են տալիս անաչառ դիտորդին եզրակացնելու, որ [REDACTED], հնարավոր է, որ կատարած լինի իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցանքը, և որ դեպքերը, իրադարձությունները համընկնում են այն առերևույթ հանցանքին, որի կատարման մեջ նա մեղադրվում է: Անդրադառնալով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերին՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վարույթի տվյալ փուլում ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ [REDACTED] կողմից քրեական վարույթին խոչընդոտելու, այդ թվում նաև՝ ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու հավանականությունը բարձր է<sup>9</sup>:

- Վերաքննիչ դատարանը, 2024 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, ըստ էության ընդունելի է համարել Առաջին ատյանի դատարանի հետևությունները<sup>10</sup>:

14. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն, իր դատական ակտով Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելով, [REDACTED] արարքում **առերևույթ** ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործության հիմնավոր կասկածի առկայությունը հաստատելիս հանգել է

<sup>7</sup> Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

<sup>8</sup> Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

<sup>10</sup> Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

վարույթի նյութերից բխող ճիշտ հետևության: Մասնավորապես, ստորադաս դատարանը, գնահատելով նախաքննության մարմնի կողմից միջնորդությանը կից ներկայացված նյութերը, իրավաչափ հետևության է հանգել առ այն, որ Առաջին ատյանի դատարանը քննիչի միջնորդության քննության ժամանակ բավարար տվյալներ է ունեցել [REDACTED] կողմից ենթադրյալ հանցանքը կատարված լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևության գալու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների՝ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ տրված գնահատականների հետ չհամաձայնվելու բավարար հիմքեր չկան:

15. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները [REDACTED] կողմից քրեական վարույթին խոչընդոտելու, այդ թվում՝ ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու հավանականությունը գնահատելիս համակցության մեջ սխալ են գնահատել վարույթի նյութերում առկա փաստական հանգամանքները:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ [REDACTED] կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու և քրեական դատավարության բնականոն ընթացքին խոչընդոտելու հավանականության աստիճանը գնահատելիս Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ [REDACTED] ներկայացված մեղադրանքում նկարագրված իրադարձությունների ընթացքում ազատվել է [REDACTED] ընկերությունում աշխատանքից և այլևս չի հանդիսանում այդ կազմակերպության աշխատակից, ինչը սույն վարույթի փաստական հանգամանքների շրջանակներում ինքնին նվազեցնում է [REDACTED] կողմից քրեական վարույթին խոչընդոտելու հավանականության աստիճանը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանի համոզմամբ էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ [REDACTED] առաջադրված մեղադրանքի հիմքում դրված են մեծամասամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալները, որոնք ունեն օբյեկտիվության և արժանահավատության ավելի բարձր չափանիշ, և որոնց վրա [REDACTED] կողմից հնարավոր միջամտության ռիսկն էականորեն ցածր է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ [REDACTED] կողմից քրեական վարույթին միջամտելու հավանականության աստիճանը բարձր

գնահատելու դատողությունը չի բխում վարույթի նյութերում առկա փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից, իսկ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը բավարար չեն քրեական վարույթին խոչընդոտելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորված ենթադրություն անելու համար:

16. Ինչ վերաբերում է բողոքաբերների սույն որոշման 5.3-րդ կետում նշված փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

*«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քննհաճ ձերբակալման կամ կալանքի փակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով»:*

*«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Եման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Վարույթի ընթացքում անձի նկատմամբ հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել ոչ այլ կերպ, քան սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: Վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելը չպետք է պարժի նպատակ հետապնդի»:*

2. Վարույթն իրականացնող մարմինն անձի նկատմամբ հարկադրանքի միջոց ընտրելիս առաջնորդվում է **նվազագույնի սկզբունքով**: Արգելվում է անձի

*նկատմամբ ընտրել ավելի խիստ հարկադրանքի միջոց, քան այն, որով քրեական վարույթի ընթացքում հնարավոր կլինի ապահովել անձի օրինական վարքագիծը»:*

մեղսագրվող արարքի բնույթի, հանրային վտանգավորության աստիճանի և սույն վարույթի փաստական հանգամանքների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձը բնութագրող տվյալները՝ որպես նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող գործոններ (մշտական բնակության վայր ունենալը, նախկինում դատապարտված չլինելը, ամուսնացած լինելը), մինչդատական վարույթի տվյալ փուլում բավարար են քրեական վարույթի պատշաճ քննության ապահովման հանրային շահի և մեղադրյալի անձնական ազատության միջև արդարացի հավասարակշռությունը հաստատելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու իրավաչափությունը քննարկելիս պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն հանգամանքը, որ խնամքին են գտնվում երկու մանկահասակ երեխաներ (որոնցից մեկը միջնորդության ներկայացման պահին մինչև երկու տարեկան): Այս հանգամանքը հատկապես կարևոր նշանակություն է ստանում մանկահասակ երեխաների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնելու, վերջինների բնականոն զարգացումն ու կենսական իրավունքների պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից:

Վերոշարադրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված **«Բանգկոկյան կանոններ»-ին**<sup>11</sup> (կին բանտարկյալների հետ վարվեցողության և այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ կանոններ), որտեղ ի թիվս այլնի, հստակ նշված է, որ կանանց ազատությունից զրկելու հետ կապված հարցերը քննարկելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել ինչպես վերջիններիս ընտանեկան դրությանը, այնպես էլ խնամքին գտնող անձանց առկայությանը և ազատությունից զրկելու հետ կապված միջոցները կիրառել **միայն խիստ անհրաժեշտության դեպքում:**

<sup>11</sup> Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2010 թվականի հուլիսի 22-ին ընդունված «Բանգկոկյան կանոններ»-ը:

Նման պայմաններում ստորադաս դատարանները, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը, [REDACTED] նկատմամբ հարկադրանքի միջոց ընտրելիս չեն առաջնորդվել **նվազագույնի** սկզբունքով ու **պատշաճ քննարկման առարկա** չեն դարձրել քրեական վարույթի ընթացքում *անձի օրինական վարքագիծն ապահովելու* նպատակով այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորությունը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն վարույթով չեն ներկայացվել **այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ**, որոնք կհիմնավորեին ստորադաս դատարանների կողմից [REDACTED] նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու ոչ իրավաչափ լինելը և մինչդասական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը:

17. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու իրավաչափության մասին ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն վարույթով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել դատական սխալ, որն իր բնույթով էական է, քանի որ հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված՝ հանրայնության սկզբունքի խախտման, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտը բեկանելու համար: Սակայն սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում դրա հնարավորությունը բացակայում է, քանի որ հսկող դատախազի՝ 2024 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ մեղադրյալն ազատվել է կալանքից, ուստի բողոքարկված դատական ակտը կորցրել է իր իրավական նշանակությունը՝ ժամանակավոր լինելու պատճառով, և դատական ակտի բեկանումը չի վերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը, հետևաբար ստորադաս դատարանների դատական ակտերը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է սույն վարույթով ճանաչել մեղադրյալ [REDACTED] ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը:

18. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15- րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. [REDACTED] վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի փետրվարի 1-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Ճանաչել [REDACTED] ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ \_\_\_\_\_ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Դատավորներ՝ \_\_\_\_\_ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

\_\_\_\_\_ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

\_\_\_\_\_ Ս.ԶԻՉՈՅԱՆ

\_\_\_\_\_ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ